ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

5 հուլիսի 2016 թվականի **թիվ 10** քաղ. Մոսկվա

Արտադրանքի՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների վիճակագրական դասակարգման մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան՝ «Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձեւավորման եւ տարածման կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 4 հավելված) 12-րդ կետին համապատասխան՝

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին ապահովել իրենց լիազոր մարմինների կողմից 2017 թվականի հունվարի 1-ից սկսած Եվրասիական տնտեսական միությունում արտադրանքի՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների վիճակագրական դասակարգման մասով՝ «Արտադրանքի վիճակագրական դասակարգում՝ ըստ Եվրոպական տնտեսական համայնքի տնտեսական գործունեության տեսակների, տարբերակ 2008» (ծածկագրի երկարությունը՝ ներառյալ մինչեւ 6 նիշ) միջազգային ստանդարտի կիրառումը, որի տեքստը ռուսերենով տեղադրված է «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում՝ հետեւյալ հասցեով. http://eec.eaeunion.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/info/Pages/ classification.aspx.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան